



**MILLENNIUM  
CHALLENGE  
CORPORATION**  
REDUCING POVERTY THROUGH GROWTH



**ՀԱՆՐԱՄՅԱԿԻ  
ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐ  
ՀԻՄՆԱԴՐԱՍ-ՀԱՅԱՍՏԱՆ**

## «ՀՄՀ-Հայաստանի» առաջին ֆերմերը

Սևան Ջամայանը տիպիկ հայ ֆերմեր է: Նա ապրում է Արմավիրի մարզի Գրիբայեղով գյուղում: Վերջերս նրա ֆերման դարձել է Արմավիրի մարզի ամենաառաջատարներից մեկը:

Սևանը և նրա համագյուղացի բազմաթիվ այլ ֆերմերներ հաճախել են ՀՄՀ-Հայաստանի Ջրից դեպի շուկա ծրագրի ներտնտեսային ջրի կառավարման դասընթացները: Բացի այդ, նրա ֆերման հանդիսանում է ցուցադրական տնտեսություն, որտեղ ներդրված են ոռոգման նոր տեխնոլոգիաներ:

**ՄԵՎԱՆ ՋԱՄԱԼՅԱՆ** - «Այսօր հայ ֆերմերի գիտելիքները շատ սահմանափակ են, գյուղացին գուրկ է հողը մշակելու և գյուղմթերք արտադրելու վերաբերյալ լրատվությունից, խորհրդատվությունից: Նրանց հարկավոր է խորհրդատվություն ստանալու հնարավորություն տալ, ինչը կնպաստի արտադրողականության ավելացմանն ու եկամուտների ավելացմանը: Բազմաթիվ ֆերմերներ պատկերացում չունեն այնպիսի տարրական բաների մասին, ինչպիսին են պարարտացումն ու ոռոգումը: Նրանք դա անում են չգիտակցելով, այնպես, ինչպես արել են իրենց հայրերն ու պապերը: Կարծում եմ՝ պետք է միայն ողջունել, որ ՀՄՀ-Հայաստանը ուսուցանում է այդպիսի գործնական բաներ, դեռ ավելին՝ ներդրումներ է անում գյուղական ենթակառուցվածքներում»:

Սևանը միշտ էլ հոգ է տարել իր հողակտորի մասին, չնայած խորհրդային տարիներին նրա նման ֆերմերները զբաղված էին գործարաններում ու կոլտնտեսություններում: 1990-ականների սկզբին տեղի ունեցած հողի սեփականաշնորհումից հետո այդ մարդիկ մնացին մեն մենակ իրենց հողակտորների հետ չունենալով անհրաժեշտ գիտելիք և միջոցներ: Չնայած Սևանը արագ հարմարվեց նոր իրականությանը և հասկացավ, որ այժմ ամեն բան այլ տրամաբանություն պետք է ունենա ու ամեն ոք պետք է հույս դնի միայն իր վրա՝ այդուհանդերձ ժամանակ էր անհրաժեշտ շուկայական տնտեսությանն անցնելու նրբություններին հարմարվելու համար: Այժմ երբ նա ՀՄՀ-Հայաստանի շահառու է, նրա այգին բավականին հագեցած է նոր տեխնոլոգիաներով, որոնք գնելու հնարավորություն նա չուներ:

Հանդիսանալով ՀՄՀ-Հայաստանի Ջրից դեպի շուկա ծրագրի ցուցադրական տնտեսություն՝ Սևանի ֆերման հիմա այն ունի բոլոր անհրաժեշտ սարքավորումները խթանելու համար դրա



Դեսպան Ջոն Դանիլովիչը Ջրից դեպի շուկայի դասընթացների ավարտական վկայական է շնորհում Սևան Ջամայանին. հունիսի 12, 2007թ, Գրիբայեղով գյուղ

եկամտաբերությունն ու ավելացնելու ընտանիքի եկամուտը: Ջրից դեպի շուկայի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Սևանին ոռոգման նոր խողովակների տեղադրման և դրանց միջոցով ոռոգման կաթիլային եղանակին անցնելու նպատակով, ինչպես նաև տեղադրվել են խոնավաչափեր ու ջրաչափ սարք: Այժմ Սևանը աշխատում է բանջարեղենի նոր մշակատեսակների փորձարկման և աճեցման, բարձրարժեք գյուղարտադրության ուղղությամբ: Նրա ֆերման օրինակ է ծառայում այլ ֆերմերների համար, ովքեր գալիս են և ուսումնասիրում առավել արդյունավետ բիզնես իրականացնելու նրբությունները: Հարկ է նշել նաև, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի ավարտից հետո այս բոլոր սարքավորումները կշարունակեն ծառայել նրան:

Ջրից դեպի շուկայի նպատակներից մեկն է՝ ֆերմերների գիտելիքների կատարելագործումը ջրի կառավարման և առավել բարձրարժեք գյուղատնտեսության անցման ուղղությամբ: Այդ նպատակին հասնելու համար դասընթացներ են կազմակերպվելու 60 000 ֆերմերի համար: ՀՄՀ-Հայաստանի Համաձայնագրի ավարտին Հայաստանում կգործի 220 ցուցադրական տնտեսություն, որոնցից 120-ը՝ ներտնտեսային ջրի կառավարման, 100-ը՝ բարձրարժեք գյուղմթերքների արտադրության մասնագիտացմամբ: